

«Հաստատված է»

«Հայաստանի բանկերի միության»

Հասարակական կազմակերպության

Խորհրդի 08.05.2024թ. որոշմամբ

Արձանագրություն 08/2024

Բաղկացած է 6 թերթից

Տպագրված է 3 օրինակից

Հայաստանի բանկերի միության նախագահ



Դ.Ազատյան

08.05.2024թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ»
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրությամբ)

ք. Երևան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի բանկերի միության (այսուհետ՝ ՀԲՄ) ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը (այսուհետ նաև՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան), ՀԲՄ կողմից հիմնարկի կարգավիճակով ստեղծված, մշտապես գործող արբիտրաժային դատարան է:

1.2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանն իր գործունեությունն իրականացնում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգի, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

1.3. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումն է՝ հայերեն լրիվ՝

- «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկ,
- հայերեն կրճատ՝ «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան»,
- ռուսերեն լրիվ՝ Финансовый арбитраж Союза банков Армении,
- ռուսերեն կրճատ՝ Финансовый арбитражный суд СБА,
- անգլերեն լրիվ՝ Financial Arbitrage of Union of Banks of Armenia,
- անգլերեն կրճատ՝ Financial Arbitration Court of UBA :

1.4. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանն ունի իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.5. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Կորյունի փող. 19 Ա, 6-րդ հարկ:

1.6. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը ստեղծված է համարվում ՀԲՄ խորհրդի կողմից սույն կանոնադրության հաստատման պահից և ենթակա է հաշվառման օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՀԲՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի իրավասությանը ենթակա են քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանին՝ այդ մասին կնքելով արբիտրաժային համաձայնություն:

2.2. Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարան դիմելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, օտարերկրյա քաղաքացիները (քաղաքացիություն չունեցող անձինք) և իրավաբանական անձինք, համայնքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում: